

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆԸ ԴԱՐԵՐԻ ՀՈՒՎՈՅԹՈՒՄ

Գ. Նարեկացու գնահատութիւնը այլ լեզուներով

Մինչեւ այժմ Նարեկացու ստեղծագործութիւնն իր արժանի գնահատականը չի ստացել միջնադարի համաշխարհային գրականութեան համապատկերի մէջ:

Այս իմաստով էլ գրականագիտական միտքը դեռ պէտք է հատուցի իր պարտքը: Թէեւ Նարեկացու անունը վաղուց արդէն յայտնի է միջագային ասպարէզում, սակայն օտարերկրացի առանձին անհատներ են միայն, որ ժամանակ առ ժամանակ ծանօթացել են հայ գրականութեան եւ մշակոյթի հետ եւ երբեմն միայն հիացմունքի մի քանի տող գրել Նարեկացու մասին: Ֆրանսիացիներին ց 19րդ դարում Նարեկացուն յիշատակել են էօժէն Բորյեն(1), Ֆելիքս Նելը(2), գերմանացիներին՝ Կարլ Նեյմանը եւ այլն: Հայերին ց առաջինը Ա. Զօպանեանն էր, որ ֆրանսերէն յօդուած է գրել Նարեկացու մասին եւ ճաշակ տալու համար մի քանի հատուածներ թարգմանել Մատեանից եւ "Մեղեդի ծննդեան" տաղը(3):

1902 Մալխի 29ին ֆրանսիացի գրող Գաբրիէլ Մուրեն Ֆրանսիայի մտաւորականութեան համար հանդէս եկաւ դասախօսութեամբ հայ գրականութեան մասին: Մուրեն Նարեկացուն համարում է "ամենաբարձրարուեստ միստիկ բանաստեղծը", որը "կարողացել է իր յոյզերն արտայայտել ամենաբուռն ուժգնութեամբ, ամենացայտուն գոյներով եւ ամենայն շօշափելիութեամբ": Հայ բանաստեղծն "ունի տաղեր, որոնց մէջ կարծես սահելով անցնում են հեթանոսութեան արձագանքն ու միստիկականութեան հեշտասարսուռ շունչը"(4): Եթէ գրաքննադատ էդմոն

Պիլոնը ճիշտ է բնորոշել Նարեկացու՝ իբրեւ միջնադարի բանաստեղծի ողորդութեան հոգեբանական ատաղձը, թէ "Նարեկացին առաջինն է տուել այն բազմերանգ տպաւորութիւնը, ուր ամենաբնական է կենցաղը, ինչպէս դանտեական ստեղծագործութեան մէջ, բախում են ամենահարկու տեսիլքների հետ", ապա յայտնի վիպասան Պոլ Ադամը բարձր է գնահատում Նարեկացու արուեստն ու ոճը, ընդգծելով, որ նա իր Մատեանի մէջ "յաւերժացրել է նարտասանական արուեստի ամենագարմանալի ձեւերը, իսկ մի շարք գլուխների մէջ ոգեշնչել է բնութիւնը՝ հայ հանճարին յատուկ շքեղութեամբ"(5):

Ֆրանսիայում Նարեկացու ժողովրդականացման պատիւը պատկանում է բանաստեղծ եւ թարգմանիչ Լյուկ-Անդրէ Մարսիին: 1950 եւ 1951 թթ. նա հրատարակեց Նարեկացուց կատարած իր մի քանի թարգմանութիւնները եւ "Գրիգոր Նարեկացին եւ Հայոց Հին Պոեզիան" յօդուածը: Գրականագէտ Ժան Բալարը 1953 թ. առանձին գրքով հրատարակեց այդ թարգմանութիւնները եւ յօդուածը(6): Որքան ոգեշունչ, նոյնքան էլ խորաթափանց է Մարսիի՝ Նարեկացուն եւ նրա ստեղծագործութեանը տուած գնահատականը: Մատեանը նա համարում է "հին լեզուի մի անգուգական յուշարձան", որին դիպչելիս "հոգիդ լուսաւորում է յանկարծակի: Նրա հմայքը ներգործում է ոչ թէ դրսից, այլ ներսից, եւ այդ պատճառով էլ նրա խօսքերը դառնում են բոլորի սեփականութիւնը"(7): Ըստ Լյուկ-Անդրէ Մարսիի՝ Նարեկացին ո՛չ թէ երկ է

յօրինում, այլ կերտում է իրեն, ո՛չ թե պերնախօսում է, այլ ժայթփում է հրաբխի մման: Եսը նրա բանաստեղծութեան մէջ ո՛չ թէ դիմակայում է անշարժութեան մէջ, այլ հանդէս է գալիս կերպարանափոխութիւնների այն բազմերանգ հնարաւորութիւններով, որոնք յանգեցնում են ցանկացածդ հոգեվիճակներին: Ֆրանսիացի բանաստեղծն արտակարգ նրբութեամբ է զգացել Նարեկացու բանաստեղծական արուեստի, լեզուի, պատկերաւորութեան միջոցների ողջ հարստութիւնը՝ հայ բանաստեղծին դասելով գերիրապաշտ համաշխարհային գրողների շարքը: Նարեկացին խորշում է այն բանաստեղծութիւնից, հաւաստիացնում է Մարսելը, որը, "միայն գուարնացնում է բառերի առ երեւոյթ գեղեցկութեամբ", "նրա նպատակն է՝ հասնել լեզուական լիակատար գունաշարի, ուր հոմանիշներն իրար են յաջորդում իմաստի լրացուցիչ նրբերազներով: Նարեկացին ուզում է լցնել բառերի միջեւ եղած արանքը: Այդ պատճառով էլ նա դիմում է հոմանիշների հնարքին եւ դրանք օգտագործում է այնպիսի առատութեամբ, որի հաւասարը չկայ նոյնիսկ արեւելեան գրականութեան մէջ"(8):

Իրրեւ թարգմանիչ՝ Մարսելն առանց դոյզն ինչ չափազանցման խոստովանում է, թէ՛ "բայց, աւա՛ղ, Նարեկացուն թարգմանելիս հենց առաջին իսկ բառերից նկատում ես, որ ֆրանսերէնը մնում է ապշահար", Նարեկացու բառապաշարի նոխտութեան յարաբերութեամբ: Անդրադառնալով Մատեանի պարբերութիւնների շոյալութեանը, շարահիւսական անհամաչափութիւններին եւ ուրիշիկ բարդութիւններին, Մարսելը գտնում է, որ առանց այդ երկարաշունչ պարբերութիւնների անհնարին է հասկանալ հեղինակի հոգետանջ ապրումները: "Այդ ծովային ուրիշը նրա

էութիւնն է: Նարեկացու նման մարդը, որ անվերջ միտուել է դէպի աստուած, չէր կարող համաչափութեան ճաշակ ունենալ: Բանաստեղծի ստեղծագործական տառապալից երկուցն է, որ գերազանցապէս մեծ է եւ վեհ"(9): Մարսելը որքան խոր է զգացել Նարեկացու ստեղծագործութեան հումանիստական ոգին, նոյնքան էլ լաւ է ըմբռնել նրա լուստեսական պաթոսը: Նարեկացին մահն անպատշաճ է համարել մարդու համար եւ ոչ ոք նրա չափ չի պահանջել ապրելու իրաւունք: "Նարեկացու համար կարեւորը լինելութիւնն է, եւ նրա պոեմը համընդհանուր մահուան միջով քանապարհ է բացում դէպի յաւիտեանական լինելութիւնը"(10):

Ծանօթանալով Լյուկ-Անդրէ Մարսելի թարգմանութեանը, գրաքննադատ Անդրէ Ռուսսոն համաշխարհային գրականութեան տեսադաշտի վրայ գծում է Նարեկացու նկարագիրը, ելնելով գրականագիտական այն նիշտ դրոյթից, որ հանհարը, լինելով իր դարի ծնունդը, արտացոլում է քաղաքակրթութեան այն մակարդակը, որին հասել է նրան ծնող ժողովուրդը: "Նարեկացուն ծնունդ տալու համար հայ ժողովուրդը պէտք է դարեր շարունակ մշակած լիներ նոյն մտքերը, խորապէս ըմբռնած, ճաշակած ու մարսած լիներ քրիստոնէութիւնը: Նարեկացու ժողովուրդը պէտք է նրա չափ տառապած լիներ, նրա նման պայքարած մեղքի դէմ՝ յանուն հոգեկան մեծութեան, յանուն անարատութեան: Այդպէս է եղել նաեւ Հոմերոսի, Դանտեի, Շեքսպիրի եւ Գյոթեի պարագան"(11):

1961 թ. Փարիզում լոյս տեսաւ Մատեանի ֆրանսերէն լիակատար թարգմանութիւնը: Թարգմանիչ Սահակ Բէշիշեանը ջանք չի խնայել բնագիրը հարազատօրէն տալու ֆրանսերէն: Թարգմանութիւնը լոյս է տեսել ֆրանսիական "Քրիստոնէական Աղբիւր-

ներ" հրատարակչութեան կողմից: Քէշիշեանն էլ թարգմանութիւնը ներկայացրել է որպէս հոգեւոր գրականութեան յուշարձան, Նարեկացուն՝ եկեղեցու սրբերից մէկը: Սա, բնականաբար, իր դերն է խաղացել ընթերցողների կողմնորոշման վրայ: Մատեանն առաջին հերթին հետաքրքրել է հոգեւոր գրականութեան ընթերցողներին:(12)

1969 թ. Երեսնում լոյս տեսաւ "Գրիգոր Նարեկացի" վերնագրով ռուսերէն մի փոքրիկ գրքոյկ: Այստեղ ներկայացուած է Նարեկացու ստեղծագործութեան մի չնչին մասը՝ երեք տող եւ վեց գլուխ Մատեանից (գլ. Ա. ԻԳ. Լ. Ծ. 2. ՂԵ), Նաում Գրեքնեի թարգմանութեամբ: Վերջաբանը գրել է գրականագէտ Լեւոն Մկրտչեանը: Ոչ ոք չէր կարող երեսկայել այն հետաքրքրութիւնը, որ յարուցեց այդ գրքոյկը: Սրան յաջորդեց միջնադարեան հայ ֆնարերգութեան ժողովածուն (1971, Լեւինգրատ), դարձեալ ռուսերէն, ուր Նարեկացին ներկայացուած է նոր թարգմանութիւններով: Եւ ահա խորհրդային մի շարք ֆննադատներ, գրողներ ու բանաստեղծներ գրեցին յօդուածներ, բանաստեղծութիւններ՝ իրենց խօսքն ասելով Նարեկացու ստեղծագործութեան մնայուն թարգմանութեան, մարդկային հոգեբանութեան նրա բացայայտման վարպետութեան, հումանիստական գաղափարների արդիական նշանակութեան մասին: Առաջին խօսքը պատկանում է Լիտվացի մեծատաղանդ բանաստեղծ էդուարդաս Մեծելայտիսին: "Տագնապալից, ինչպէս Բախի Խորալները" - այսպէս է խորագրել նա իր յօդուածը: Մեծելայտիսը Նարեկացուն դասում է համաշխարհային գրականութեան մէջ փիլիսոփայական ուղղութեան ամենահետաքրքիր բանաստեղծների շարքը: "Նա զգացի նշանաւոր անհատին - գրում է նա - ու նրա տանջուած, տառապող ու պայքարող ոգին:

Զգացի դրամատիկական տագնապ, որ հասանելի է միայն նրան, ով ցանկանում է ընդգրկել եւ ըմբռնել կեանքի, ցանկատագրի, տիեզերքի բոլոր խորհուրդները":(13)

Ուշագրաւ դիտողութիւններ ունի Ալեքսանդր Դեյչը իր "Վշտի եւ Ցասման Պոեզիա" յօդուածում: Նա գտնում է, որ՝ ա) Նարեկացու՝ աշխարհի անկատարութեան մասին եւ ինչն ընկալում է որպէս կենսական մեծ փորձի արդիւնք, որպէս մարդու կոչմանը հաւատարիմ մնալու ցանկութիւն. բ) "Մարդկային եւ աստուածային փոխադարձ կապը Նարեկացու պոեզիայում կորցրել է իր աստուածաբանական բնոյթը". գ) "Նա փառաբանել է խելացի կամքը եւ լուսաւոր խիղճը այն մարդու, որը չի ցանկանում մնշուած լինել ինչ-որ ամենագօր, չնանաչուած ուժից" եւ վերջապէս, դ) "Նարեկացու պոեզիայում հիմնականն այն է, որ նա դիմում է մտածող, զգացող եւ տառապող անհատի ներաշխարհին"(14): Նարեկացու ստեղծագործութեան հասարակական էութեան, ժամանակի եւ միջավայրի ֆննադատութեան գնահատականը լաւ է տուել ռուս մէկ այլ ֆննադատ՝ Ալեքսանդր Դիմշիցը: "Նարեկացու խոստովանանքը - գրում է նա - ցոյց է տալիս ժամանակի եւ շրջապատի նկատմամբ նրա ունեցած դժգոհութիւնը, շրջապատող մարդկային միջավայրի յանցաւորութիւնը, իսկ չէ՞ որ այդ միջավայրը հենց եկեղեցական այն մթնոլորտն էր, որը բանադրանքի էր ենթարկել Նարեկացու հօրը՝ եպիսկոպոս Խոսրով Անճուացուն, այն միջավայրը, որտեղից մեզ է հասնում բանաստեղծին պարսաւողների եւ բանասարկողների ձայնը"(15):

Նարեկացու ստեղծագործութեան այժմեականութեանը հիանալի էջեր է նուիրել ռուս ֆննադատ Ստանիսլավ Ռասսադինը: Նարեկացուն նա գնահատում

է համաշխարհային եւ, մասնաւորապէս, ռուսական պոեզիայի զարգացման տեսանկյունից, գտնելով, որ 10րդ դարի հայ բանաստեղծը կարողացել է կոահել պոեզիայի զարգացման մի քանի էական յատկանիշները: Ամենից առաջ դա համարում է Նարեկացու խորաթափանցութիւնը՝ աստծու կեցութեան միջոցով մարդկային իր ինքնաճանաչողութեան, ինքնագագողութեան եւ ինքնահաստատման իրողութիւնը: Նարեկացին հասնում է ինքնավերլուծութեան՝ իր հոգու մէջ արտացոլելով աշխարհի աններդաշնակութիւնը: Հիանալի պայծառատեսութիւնը սրում է բանաստեղծի դիտողականութիւնը, եւ նրա լոյսի տակ էլ նա տեսնում եւ զգում է թէ՛ աշխարհի եւ թէ՛ իր անկատարութիւնը: Ռասսադիւնը Նարեկացու երկուութիւնը զուգահեռում է Հավելտի հոգեկան տուայտանքների հետ: Այս իմաստով էլ Նարեկացուն նա համարում է եւրոպական հումանիստների նախորդը: Հետաքրքրութիւնը Նարեկացու նկատմամբ Ռասսադիւնը բացատրում է նրա մտքերի ու զգացմունքների այն կենսունակ տարբերով, որոնք "արտայայտում են նաեւ այն, ինչով շնչում է մեր հարիւրամեակը, մեր ժամանակը" (16): "Նարեկացու տանջալից աններդաշնակութիւնը, անտարակոյս, մեզ հասկանալի է դառնում այժմ: Բայց դա կար: Դա եղել է 10րդ դարում: Ներդաշնակութեան գիւնը, հոգու վերածնութեան արժէքը բացայայտել է հին Հայաստանի մեծ բանաստեղծը: Այնպէս որ Նարեկացու պոեզիայի արդիականութիւնը ոչ թէ դատարկ խօսք է, այլ իրականութիւն" (17) - գրում է Ռասսադիւնը:

Ընդհանուրովը եւս գտնում է, որ Նարեկացուն ամենից առաջ յուզել է թէ՛ աշխարհի եւ թէ՛ մարդու ներքին աններդաշնակութեան հարցը, կեանքն արժանավայել ապրելու եւ մեղքերից մաքուր լինելու խնդիրը: "Աստուած, Գրիգոր

Նարեկացու՝ 10րդ դարի բանաստեղծի համար, աշխարհի բացարձակ Խիղճն է, մարդն այդ խիղճի միայն յարաբերական եւ անկատար մարմնացումն է - գրում է Օգերովը: - Բայց իր անկատարութեան գիտակցումը եւ այն յաղթահարելու ձգտումը մարդուն դարձնում է շարժունակ՝ աստծու՝ իբրեւ անշարժ երեւոյթի յարաբերութեամբ: Սրա մէջ է Նարեկացու կարեւոր յայտնագործութիւնը" (18):

Հանելի է հաղորդուել այդ հեղինակների լայնախոհութեանը: Նրանք համեմատութեան աղբյւրներ, զուգահեռներ, առնչութիւններ են տեսնում Նարեկացու եւ համաշխարհային գրականութեան հին եւ նոր դարերի այնպիսի մեծութիւնների միջեւ, ինչպիսիք են Հովնաթոսն ու Հորացիոսը, Ավգուստինոս Երանելին, Դանտեն, Շեքսպիրը, Դոստոեւսկին, Տոլստոյը, Պուշկինը, Գոգոլը, Ուիլսոնը, Ռիլկեն եւ ուրիշներ: Օգերովը, օրինակ, հոգեբանական զուգահեռ է տեսնում Նարեկացու կերպարի եւ Պուշկինի "Պոետին" բանաստեղծութեան քնարական հերոսի միջեւ: Քանի դեռ նրանց չի դիպել ներշնչանքի կայծը, նրանք իրենց համարում են "չնչիւնների մէջ չնչիւնագոյնը", բայց ստեղծագործական երկունքի թափը այդ բանաստեղծներից դարձնում է հոգեհարազատ. "Ինչպիսի ծարաւ կայ կատարելութեան՝ թէ՛ մէկի եւ թէ՛ միւսի մօտ, ինչպիսի ձգտում դէպի ոգու բարձունքները" (19):

Անշուշտ, շատ աւելի կարեւոր է միջնադարագէտների կարծիքը Նարեկացու մասին: Վաղիմիր Ռոգովը ընդգծում է, որ "Համաշխարհային գրականութիւնը չգիտէ ուրիշ մէկ այլ մեծ ստեղծագործութիւն, որ այդքան մեծ ծաւալ ունենար եւ գերծ լինէր սիւժետային միջեւ իսկ որեւէ ակնարկից" (20): "Բուժիչ Լոյսը" - այսպէս է խորագրել իր հետաքրքիր ուսումնասիրութիւնը Մատեանի ռուսերէն

թարգմանիչներից մեկը՝ Վլադիմիր Միկուշեիչը: Նարեկացու ստեղծագործութիւնը նա դիտում է ֆրիստոնէական եւ, առհասարակ, միջնադարի գրականութեան տեսադաշտի վրայ՝ անելով մի շարք ինքնատիպ դիտողութիւններ: Միկուշեիչի նիշտ դիտարկմամբ՝ Նարեկացու ստեղծագործութիւնն ամբողջութիւն է ստացել ֆրիստոնէական ուսմունքի հիմունքների վրայ՝ պահպանելով հայոց դաւանանքի միաբնակութեան աւանդոյթը: Քրիստոսի բնութեան մասին վեճերը Միկուշեիչը համարում է մարդու էութեան մասին վեճեր, որովհետեւ նրա մարդեղութիւնն է, որ մարդուն հաղորդակից է դարձնում աստուածութեանը: Մարդը հանդէս է գալիս որպէս համաշխարհային դրամայի իսկական գործող անձ, եւ ոչ թէ արտաքին ուժերի ինչ-որ խաղալիք: Մարդկային անհատը իր հիմնաւորումն է գտնում կեցութեան մէջ եւ արուեստի մէջ, հանդէս է գալիս իր հոգեկան բարդ աշխարհով: Նա խոստովանում է իր մեղքը, գղջում մեղքերի համար: Ըստ Միկուշեիչի՝ Նարեկացու գղջումներն ապշեցնում են իրենց անձնական շեշտով, անկեղծութեան խորութեամբ, սակայն նրանց մէջ անպայմանօրէն չպէտք է փնտոնել կենսական փաստեր:

Բանաստեղծի եւր Միկուշեիչը իմաստաւորում է երեք մակարդակով. ա) "Կոնկրետ մարդկային եւ-ով ներկայացուած է առանձին կեանքի յարաբերակցութիւնը սեփական անձի անսպառելիութեան հետ": Անհատն աւելի հարուստ ներաշխարհ ունի, քան կարող է արտայայտուել: Բ) Եւր հենց ինքը մարդկային անձնաւորութիւնն է՝ իր իսկ սահմանափակ իրավիճակում: Այս մակարդակում մարդը հանդէս է գալիս իբրեւ իր ամբողջութեան շղթայի մի խախտուած օղակ: Նա կհած է իր էութիւնը կլանած ողբերգութեան սահմաններում: Նարեկացու համար դա

ինքնագիտակցութեան այն բարձունքն է, ուր նա իր ողբերգութիւնը բանաձեւում է այսպէս. "Եւ ամենայնն, եւ յիս ամենեցուն" (Բան ԸԲ, գ): Եւ վերջապէս, գ) Եթէ դանտէական դժոխքի պատիժը նոյնացնում է մեղքը մեղաւորի հետ եւ նա պարփակուած է իր տանջանքների անել մեկնութեան մէջ, ապա Նարեկացու համար մարդկային մեկնութիւնը կործանարար մոլորութիւն է (21):

Գրականագիտական նուրբ դիտարկմամբ է բացայայտուած Նարեկացու ողբերգութեան էութիւնը: Նարեկացին տառապալից երկուութիւն է ապրում՝ հոգու փրկութեան հասնելու ցանապարհին: Մարդը երկատում է իրեն յատուկ կատարեալի միասնութեան առաջ: Այդ կատարեալ միասնութեամբ օժտուած է Քրիստոսը՝ Նարեկացու իղէալը: Բայց հենց այս յարաբերութեան մէջ էլ երեւում է, թէ որքան հեռու է մարդը աստուծուց: Ըստ Միկուշեիչի՝ Նարեկացու ստեղծագործութեան մէջ բնութեան գեղեցիկը գեղեցիկ է հենց այն պատճառով, որ նախանշում է մարդկային գեղեցկութիւնը, իսկ երկուսը միասին՝ աստուածայինը: Անդրադառնալով լոյսի այլաբանութեանը, Միկուշեիչը գրում է, որ "Լոյսը ժողովրդական նշմարտութեան բուն տարրերն է, հենց ինքը՝ ժողովրդական նշմարտութիւնը, որ թոյլ է տալիս ցանաչել չարն ու բարին, ստիպելով զանազանել չարը բարուց: Իւրաքանչիւր մեղքի բացայայտում ազդարարում է ժողովրդական նշմարտութեան յաղթանակը: Զղջումը Նարեկացու համար լոյսի յաղթանակ է մարդկային հոգում (22):

Վլադիմիր Միկուշեիչի թարգմանութեամբ 1985 թ. Մոսկվայում լոյս տեսաւ Նարեկացու Մատեանը: Թարգմանութիւնը հնարաւորութիւն է տուել առաւել խոր քափանցելու նաեւ Նարեկացու արուեստի, լեզուի ու ոճի, տաղաչափութեան, հանգա-

ւորման, հնչիւնագրութեան եւ այլ նրբութիւնների մէջ: Նարեկացու չափածոն Միկուշեւիչը համարում է "վերհանգային բանաստեղծութիւն"՝ խտացած իմաստների կատարեալ ներդաշնակութեամբ, որի "վեհաշուք համաչափութեան համեմատութեամբ թէ՛ արեւմտեան սոնետը եւ թէ՛ արեւելեան "գագերը" թոււմ են քմահան էսփիզներ" (23):

Նարեկացու մասին լուրջ եւ ծանրակշիռ խօսք է՝ անուանի միջնադարագէտ Սերգեյ Ավերինցեւի "Գրիգոր Նարեկացու Պոեզիան՝ Զարդանախշի Շքեղութիւնը եւ Սրտի Խորքերը" յօդուածը: Ավերինցեւը ամենից առաջ Նարեկացու ստեղծագործութիւնը դիտում է հայ մշակոյթի եւ գրականութեան համապատկերի մէջ որպէս ընդհանուր այն ոգու խօսքային արտայայտութիւն, որը ոգեշնչել է հինաւուրց հայ նարտարապետներին, քարի եւ վրձնի վարպետներին՝ հասնելով գեղարուեստական ազատութեան մի հասունութեան, որից երեք դար առաջ արդէն մտայղացուել եւ կառուցուել էր Զուարթնոցը: "Աշխարհում չես գտնի ոչ մի տեղ այնպիսի ծանրակշիռ ու խստահայեաց ձեւերի ու պատկերների առատութիւն, որ գրեթէ ան է ներշնչում, ինչպէս Զուարթնոցի խոյակների զարդաքանդակները - գրում է Ավերինցեւը - բայց երբ Նարեկացին սկսում է ծաւալել իր փոխաբերութիւնները, որոնց վերջը չի երեւում եւ որոնցից կտրուում է շունչդ, ապա այդ ուժն անելի պակաս չէ, եւ ընդհանուր շատ բան կայ մտայղացման տրամաբանութեան մէջ" (24): "Մի ողջ ժողովուրդ Նարեկացու պոեզիան մօտ է ընդունել իր սրտին" (25): Եւ ապա "Նարեկացու պոեզիան վաւերացնում է ինչպէս հին հայկական մշակոյթի ինքնատիպութիւնը, այնպէս էլ հենց իր՝ Գրիգորի բանաստեղծական հանճարի անկրկնելիութիւնը" (26) - ընդհանրացնում

է Աւերինցեւը:

Նարեկացու քնարական եւսի բնութագիրը Ավերինցեւը տալիս է միջնադարի պոետիկայի եւ գեղագիտութեան համակարգի տեսանկիւնից: Բանաստեղծն աղօթում է համայնքի անունից եւ նրա իւրաքանչիւր անդամ այդ խօսքն ընդունում է իրրեւ իր խօսքը: Բանաստեղծն ու ընթերցողը ձուլոււմ են մի ամբողջութեան մէջ՝ իրրեւ բացարձակ եւսի արտայայտութիւն: "Այստեղ անթոյլատրելի է երկատումն ու դերասանական զգեստաւորումը: Սա նշանակում է - անելի յստակ է դարձնում իր միտքը Աւերինցեւը - որ անհատական կենսագրութեան բոլոր նշանները պէտք է վերացուեն կամ ընդհանրացուեն համամարդկային այնպիսի թեժումով, ուր ամէն մի մանրամասնութիւն առանց մնացորդի դառնայ խորհրդանշան" (27): Այնուհետեւ՝ "Նարեկացին ասես ձեռքի հզօր թափով խորտակում է եսի եւ ոչ-եւսի միջեւ եղած անջրպետը, որպէս զի անկարելի լինի զանազանել իր համար աղօթքը բոլորի համար աղօթքից" (28):

Կարելի էր բանաստեղծի անհատականացման այս աստիճանի ընդհանրացման դէմ վիճել, յղելով առանձին ինքնակենսագրական ակնարկներ Մատեանից, ինչպէս վարուել է Լ. Մկրտչեանը (29), եթէ Ավերինցեւն այնուամենայնիւ չընդունէր նաեւ Նարեկացու անհատականութեան իւրայատկութիւնը, նրա ինքնութեան անանց գօրութիւնը: "Բանաստեղծ վանականը - գրում է նա - շատ կտրուկ է վարում իր ստեղծագործութեան անհատական հոգու հետ, մերժում է նրան կենսագրական որեւէ մի գծի հետ նոյնացնելուց, առանց մնացորդի ջնջում է դիմանկարային ամէն ինչ, նեղացնում նրա տարերային ինքնա-արտայայտութիւնը, բայց հենց այդ հոգու կեանքը պահպանուած է ուղղակի ձեւով" (30): Սա է, որ խորապէս ներդաշն

Եւ գեղագիտական ելակետին: Եւ պատահական չէ, որ Ավերինցեւը, նոյնիսկ հերքելու նպատակով, չի տալիս Վերածննդի անունը: Նարեկացին միջնադարի բանաստեղծ է, եւ Ավերինցեւը լիովին իրաւացի է նրան տուած իր ընդհանուր բնութագրի մէջ: "Զարդիականացնելով հայոց հին բանաստեղծին, չպնդելով ոչ նրա ազատախոհութեան, ոչ նրա պանթիզմի եւ ոչ էլ նրա աստուածամարտութեան վրայ, մենք լիակատար իրաւունք ունենք նրա դիրքը գնահատելու որպէս խորապէս մարդկային"(31), այլ կերպ ասած՝ իրրեւ ֆրիստոնէական հումանիզմի արտայայտութիւն:

Մարդկութիւնն այսօր առաւել քան երբեւէ, կարօտ է բարոյական մաքրութեան: Նարեկացու պոեզիան օգնում է ժողովուրդների բարոյական մթնոլորտի վերափոխմանը: Պատահական չէ, որ իր ողբերգական վախճանից առաջ, Նեղիշէ Զարեհը հոգու գորավիզ էր որոնում Նարեկացու կերպարի լոյսի մէջ: Բոլոր ժամանակների մարդու համար կենդանի հետաքրքրութիւն է պահպանելու Նարեկացու այս պարզ եւ, միաժամանակ, խորիմաստ հարցը. Որ ոչ իսկ ծանեայ գիւ երբէք գիտել՝ Թէ յո՞վ եւ յո՞յր պատկեր, Եւ վասն ո՞յր գոյացայ:

(Բան ԽԶ, ա)

Եւ այսպէս, խորհրդային բազմազգ գրականագէտների, գրողների, բանաստեղծների, թարգմանիչների, գիտնականների, ինչպէս նաեւ աշխարհի այլ ժողովուրդների մտաւորականների առանձին գնահատականներ, որոնք թէեւ յաճախ սրտի խօսք են եւ ոչ անպայման գիտական տեսակետ, իրենց ամբողջութեան մէջ, տարբեր մօտեցմամբ եւ այլազան հայեցակետերից, բացայայտում են Նարեկացու ստեղծագործութիւնը՝ նոր գեղեցկութիւններ եւ համամարդկային նոր արժէքներ տեսնելով նրա մէջ:

ԱՂԻԻՐՆԵՐ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Գլուխ Երրորդ

Գ. Նարեկացու Գնահատութիւնը այլ լեզուներով

1. Eugene Bore, Correspondance et memoires d'un voyageur en Orient, Paris, 1840, t, 2, p. 92.
2. Felix Neve, L'Armenie chretienne et sa litterature, Louvain, 1886, p. 256-267.
3. Տես՝ Հ. Գասպարեան, Գրիգոր Նարեկացին Ֆրանսիական Գրական Մտքի Գնահատմամբ, "Սովետական Գրականութիւն", նո. 6, էջ 146-151:
4. Նոյն տեղում, էջ 146
5. Նոյն տեղում, էջ 147
6. Luc-Andre Marcel, Gregoire de Narek et l'ancienne poesie armenienne, Paris, 1953, p. 19-36
7. Լ. Ա. Մարսել, Աշխ. աշխ., էջ 30
8. Նոյն տեղում, էջ 31-32
9. Նոյն տեղում, էջ 35
10. Նոյն տեղում, էջ 36
11. "Անդաստան", Փարիզ, 1960, նո. 2, էջ 61
12. Հ. Գասպարեան, Աշխ. աշխ., էջ 150
13. «Читая Нарекаци», Ереван, 1974, с.27.
14. Նոյն տեղում, էջ 30-31
15. Նոյն տեղում, էջ 19
16. Ст. Рассадин, Цена гармонии, Ереван, 1976, с.25.
17. Նոյն տեղում, էջ 24
18. Л.Озеров, Проза души скорбящей: в кн. Нарекаци, Книга скорбных песнопений, пер. В. Микухевича, М. 1985, с.4.
19. «Читая Нарекаци», с. 23.
20. Նոյն տեղում, էջ 91
21. В. Микухевич, Целительный свет, Рязь, 1981, նո. 3, էջ 65-66
22. Նոյն տեղում, էջ 69
23. Նոյն տեղում, էջ 73
24. С.Аверинцев «Лит. Армения», 1986, №1, с. 53.
25. Նոյն տեղում, էջ 49
26. Նոյն տեղում, էջ 53
27. Նոյն տեղում, էջ 54
28. Նոյն տեղում, էջ 56
29. Л.Михтчин, Видел ли Нарекаци море?, «Лит. Армения», №4. 1986, с. 97-98.
30. С.Аверинцев, Աշխ. աշխ., էջ 55
31. Նոյն տեղում, էջ 60